

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

170

# ԿՐՈՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ-ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆԱՑ ԱՐԱՐԱՑՅԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ



Կազմեց վ. Միքայելյան

Հայակագրման և առնված Կազմբաժնում բեզիս-  
տրացիոն գրքի № 3-ի տակ գեկտեմբերի 19-ին 1923 թ.  
վոր յեզ հաստավում և ստորագրությամբ ու կնիքով.

Կազմբաժնի վարիչ՝ Դաբաղյան  
Տեղեկա-իրահ. բաժնի վարիչ՝ Դանիելյան

19 գեկտ. 1923 թ.

---

Հայարակություն Հայ-Ավետարանական  
Արարացյան Համայնքի Խորհրդի.

ԿՐՈՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ  
«ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ» ՀԱՅ-ԱՎԵՏԱ-  
ՐԱՆԱԿԱՆԱՑ.

ա. Հիմնական որենքներ.

§ 1. Հայ-Ավետարանականաց «Արարատյան Համայնքը» զուտ կրոնական կաղմակերպություն ե. նրա գործն ե ավետարանչությունը—Ավետարանի պրոպագանդան:

§ 2. Համայնքի կրոնական-վարչական ձևը ժողովական ե:

§ 3. Համայնքի վարչական մարմինը կոչվում է Համայնքի Խորհուրդ և ընտրվում ե ընդհանուր ժողովի  $\frac{2}{3}$  քվեյի մասնակցությամբ:

§ 4. Համայնախորհուրդը Համայնքի ներկայացուցիչն ե ամեն տեղ, նա գործադիր և վարիչ մարմին ե, բայց պատասխանատու ընդհանուր ժողովի առաջ:

§ 5. Համայնախորհուրդը պիտի հսկե Սահմանադրության և ընդհանուր ժողովի վորոշումների կատարմանը, նա կարող է մշակել նոր որենք-կանոններ, վորոնց ընդունելությունը պիտի կատարվի ըստ § 17-ի:

§ 6. Առանց նախորոք ծանուցման և հավանության վնչ մի ժողով, վնչ մի պաշտոնյայի կարգում, վնչ մի նոր որենք-կանոնի կիրառում որինավոր չէ համարվում:

§ 7. Պաշտոնի կարող են կանչվել միայն քսանտարին լրացրած իրավատեր անդամները՝ յերկու սեփական ել:

§ 8. Հյուր և համայն-անդամները (թեև աղատ հա-

դորդականներ) քվե տալու և պաշտոնի կանչվելու իրավունքից զուրկ են, մինչև վոր իրավատեր անդամ չճանաչվեն որինական ձևով:

§ 9. Քվեատու անդամ ճանաչվում են բոլոր յերկու սեռ, չափահաս և միաժամանակ իրավատեր հաղորդանշամները:

§ 10. Ժողովներում ամեն հարց վճռվում ե քվեների մեծամասնությամբ և վոչ թե ձայների բազմավորությամբ (շահող քվեն անպայման պետք ե քվեատուների կեսից ավելի լինի):

§ 11. Պաշտոնյա (ավետարանիչ-քարոզիչ) կարող են կարգվել միայն այն անձինք, վորոնք միաժամանակ այդ գործին ամենայնիվ հարմարություն ունենալու վկայաթուղթ ունեն Համայնքի Խորհրդից և հավանության թուղթ՝ ժողովրդից:

§ 12. Համայնքի բոլոր պաշտոնյաներն ել պետք ե ունենան վկայագրեր համապատասխան մարմիններից:

§ 13. Բոլոր տրված թղթերը պիտի կրեն համապատասխան մարմինների կամ անձանց ստորագրությունը և կնիքը:

§ 14. Համայնքի ավետարանչական գործին նյութապես հստաբակամ չաջակցողը, նրա վարչական կանոններն անսաստողը, դավանանքն ուրացողը կամ վորեն խնդրում Ավետարանին նախատինք բերողն այլև անդամ չի ճանաչվում:

§ 15. Համայնքի գործը և դավանանքը չի կարելի յերբեցե մերժել, փոխարինել կամ ըստ իմաստին բարեփոխել այլ միայն ըստ արտահայտության:

§ 16. Համայնքի բոլոր յեկեղեցիները (նույնպես պաշտոնյա, անհատ) ավետարանչական և նրա տնտեսական խնդիրներում ոտար առաքելությունների կամ յեկեղեցիների հետ գործակցական հարաբերություն

մեջ կարող են մտնել սիայն Համայնքի Խորհրդի միջոցով, ի բաց առյալ անհատական բնույթ կրող խընդիրները:

§ 17. Որենքների սրբագրումը կամ նորերի ընդունելությունը պիտի կատարվի յեռակի հավանությամբ  $\frac{2}{3}$  քվեյի, այսինքն՝ նախ պետք ե յուրաքանչյուր յեկեղեցու  $\frac{2}{3}$  քվեյի հավանությունը. այդպիսի հավանություն տվող յեկեղեցիները (կազմակերպյալ կամ անկազմակերպյալ) պիտի կազմեն Համայնքի բոլոր յեկեղեցիների  $\frac{2}{3}$ -ը, յերրորդ՝ Համայնքորհությի  $\frac{2}{3}$  քվեն:

§ 18. Որենքների սրբագրության և նորերի ընդունելության ձևական վավերացումը վերապահված և Համայնքի ընդհանուր ժողովին:

#### Բ. Մասնավոր սկզբունքներ.

Հատված 1. «Արարատյան Համայնք» հորդորքումը.

Յերեանի նահանգում «Հայ-Ավետարանականաց Համայնք» գոյություն ունի 1850 թ. ի վեր «Արարատյան Համայնք Հայ-Ավետարանականաց» հորժորջումը ներկայումս կրում են նախկին Յերեանի նահանգի հայ-ավետարանական քիստոնյաները 1914 թ. ի վեր, յերբ նրանք՝ տարբերելու համար իրանց այլ քրիստոնյա համայնքներից, մի խնդրագրով ներկայացան կովկասի փոխարքա Վարանցով-Դաշկովին իրքի «Հայ-Ավետ. Արարատյան Համայնք», վորը հարգելով նրանց խնդրելու, իր մեկ գրությամբ 31 հունվ. 1914 № 4150 պաշտոնապես վավերացրեց այն, Վերոհիշյալ խնդրի հետ Համայնքը փոխարքային ներկայացրեց նաև սույն համառոտությունն այն մշակյալ և ընկալյալ բայց գեռես անտիպ «Ուղեցույցի», վորով նա վարում ե իր գործերը:



1-2437912

Հատված 2.

Համայնքի գործը.

Համայնքի յեղակի գործն և ավետարանչությունը, իր կոչումն և համարում ամենայնիվ ծառայել Աստծուն և գործել ընկերի հոգեոր ու մարմավոր բարորության համար միանդամայն, Համայնքն ավետարանչական գործ ունի Հ. Ս. Խ. ամբողջ Հանրապետության մեջ, իրեն նախկին Յերևանի նահանգի: Համայնքի գործը չուս աստիճան ունի. ա) մարդկանց աշակերտել Ավետարանին, բ) աշակերտյալներին հրահանգել Ավետարանի բարոյականով և կյանքով, գ) կազմակերպել յեկեղեցիներ այդ հավատացյալներից և դ) կառավարել Համայնքի թե կաղմակերպյալ և թե անկազմակերպ յեկեղեցիներ՝ իրեն մեկ «Արարատյան Ավետարանական Հավատացյալների Միություն»:

Հատված 3.

Համայնքի կառավարությունը.

Համայնքն իր ընդհանուր գործերը վարելու համար ունի իր Խորհուրդը, ընտրված վորոշ ժամանակով (1—3 տարի) ընդհանուր ժողովի կողմից, վորի վարչության ձևը ժողովական է: Համայնքի և նրա յեկեղեցիների բոլոր հարցերը վճռում են ընդհանուր կամ մասնավոր ժողովներով, իսկ վորոշումների գործադրությունը հանձնվում է հոգաբարձական խորհուրդներին: Հոգաբարձական խորհուրդները միենույն ժամանակ ներկայացնեցիներ են Համայնքի և նրա յեկեղեցիների: Համայնքն ունի իր սեփական կնիքը 1917 թվից: Համայնքին ուղղած գրությունները պիտի կրեն այս խորագիրը. «Արարատյան Համայնքի Խորհրդին Հայ-Ավետարանականաց, Յերևան»: Համայնքի յեկեղեցի-

ներն իրենց տեղական—ներքին գործերը վարելու մեջ անկախ են, պայմանով՝ վոր չհակասեն Սահմանադրության վոգուն:

Հատված 4. Համայնքի անդամությունը.

Համայնքին կարող են անդամակցել բոլոր յերկանոչ չափահամները (17 տ. և վեր), վորոնք հարգում են նրա դավանանքը և հնազանդում վարչական կանոններին. բայց պաշտոնի կանչվելու իրավունք ունեն միայն նրանք, վորոնք լրացրել են 20 տ. և միենույն ժամանակ իրավատեր հաղորդանդամ: Են: Համայնքի ըոլոր անդամները բաժանվում են յերկու ընդհանուր կարգի՝ ա) իրավատեր և բ) աղատ-հաղորդականներ, սակայն յերկուսն ել ձանաչվում են Համայնքիս հարազատ անդամները: Անդամների անչափահաս զավակները համարվում են Համայնքի օրինավոր և հարազատ անդամները, բայց վճար կամ իրավատեր, Համայնքին կարող են անդամակցել անհատներ, ընտանիքներ և ամբողջ համայնքներ: Վարչական կանոններն անսաստողը կամ վորեւ գործում հանցավոր ձանաչվողը և աղդարարության դեպքում յերից համառորեն մերժողն արձակվում է Համայնքի անդամությունից: Հրաժարյալ կամ արտաքսյալ անդամի գործունեյության համար Համայնքն այլևս պատասխանատու չե, և վոչ մի պահանջ անելու իրավունք չունի նա Համայնքից:

Հատված 5. Համայնքի դավանանելը.

Համայնքն իր անդամների համար ըրիստոնեական կենաց և հավատքի ուղիղ կանոն ձանաչվում և միմիայն Ս. Գիրքը՝ բաղկացած հին և նոր կտակարանների կանոնական գրքերից և համարներից, նա հավատում է

Ս. Յերբորդության, այսինքն՝ Հայր, Վորդի և Ս. Հոգի՝ մի, անձնավոր, կենդանի, ամենուրեք, ամենա-  
կարող, ամենազետ, ամենիմաստ, ճշմարիտ, սուրբ,  
անփոփոխ, բարի, արդար և ամենայնի Արարիչ ու  
հախախնամող Աստծուն Համայնքը Հիսուսին ընդու-  
նում և իրեն Աստուծո Քրիստոսը, միակ Փրկիչ և  
Միջնորդ մարդկանց և Աստուծո մեջ Համայնքը հա-  
վատում և Ավետարանի հայտարարած ձրի Քափության  
և Վերստին Ծննդյան խորհուրդներին, Փրկության  
ելական պայմանը ճանաչելով կենդանի հավատքն ու  
ճշմարիտ ապաշխարությունը Նա հավատում և Քրիս-  
տոսի ծննդյան, կենաց, մահվան, հարության, համ-  
բարձման, 2-րդ գալույան, մեռելների հարության,  
վերջին դատաստանի և հանդերձյալ կենաց իրողու-  
թյուններին ճիշտ այսպես, ինչպես սովորեցնում և  
Ավետարանը Համայնքը յերկրպագության առարկա  
ճանաչում և միայն Աստծուն հանձին Հոր, Վորդու և  
Ս. Հոգու Համայնքն ընդունում և Մկրտությունը  
(լոկ ջրով) իրեն Վերստին Ծննդյան, իսկ Հաղորդու-  
թյունը (սոսկ հացով և գինով) Քափության Խորհուրդ-  
ների տեսանելի նշանակներ, այլ վոչ յերբեք Փրկա-  
րար միջոցներ կամ պայմաններ Համայնքն ավետա-  
րանչությունը ճանաչում և աստվածային պատվեր,  
Փրկությունը հայտարարելու յեղակի և ուղիղ միջոց  
ու Քրիստոսի յեկեղեցու սուրբ պարտականություն:  
Համայնքն ամուսնությունն ընդունում և իրեն աստվա-  
ծային սահմանադրություն և դատապարտում և խառը  
կամ ապօրինի կյանքն իր անդամների վերաբերմամբ  
Համայնքը, հարգելով որինական իշխանությունն իրեն  
աստվածային սահմանադրություն՝ նրան հնազանդելն  
Ավետարանի գծած սահմաններում, համարում և պար-  
տավորեցուցիչ իր անդամների համար Համայնքը

նուրբ սահման և գծում Ավետ Խորհուրդների, Փրկու-  
թյան պայմանների և ջնորհաց միջոցների մեջ՝ տալով  
յուրաքանչյուրին իր արժանի տեղը: Համայնքը Ս. որը  
ճանաչում և աստվածային սահմանադրություն և նրա  
նպատակահարմար պահպանությունը պարտավորիչ ու  
միանգամայն ոգտակար իր անդամներին:

#### Հատված 6. Համայնքի վարդապետությունը.

Վարդապետությունն այն մասնավոր հայեցողու-  
թյունն ե, վորով Համայնքն արտահայտվում և կրո-  
նական վորեա խոդրի նկատմամբ: Համայնքը վարդա-  
պետությունը տարրերում և դավանանքից նրանով, վոր  
առաջինի մեջ անդամներն ազատ են տարակարձիք  
լինելու, իսկ դավանանքի մեջ վոչ, վորովհետև դա-  
վանանքը Համայնքի հավատալյաց հիմնական սկզբունքն  
ե, իսկ վարդապետությունը՝ յերկրորդական: Համայնքը  
հավասարապես հարգում և և այլ քրիստոնյա համայնք-  
ների վարդապետությունը, պայմանով, վոր այն հիա-  
կասե իր դավանանքին:

#### Հատված 7. Համայնքի նպատակը.

Համայնքի նպատակն և գործել մարդկային սեռի  
յերջանկությունը՝ կովելով վոչ թե չարիքի այս կամ  
այն տեսակի ձեռի, այլ բուն չարիքի զեմ: Իսկ բուն  
չարիքը, ըստ տեսության Համայնքի, թաղնված և  
մարդու անկյալ բնության ապականված սրտում:  
Համայնքն ընդունում ե, վոր մարդու ճշմարիտ յեր-  
ջանկությունը յերաշխավորելու և մշտնջենավորելու  
անհրաժեշտ պայմաններն են՝ ա) մեղքի թողություն,  
) սրտի նորոգություն: Իսկ այս արդյունքը կարելի

Ա. Յերբորդության, այսինքն՝ Հայր, Վորդի և Ա. Հոգի՝ մի, անձնավոր, կենդանի, ամենուրեք, ամենաշեղող, ամենազետ, ամենիմաստ, ճշմարիտ, սուրբ, անփոփոխ, բարի, արդար և ամենայնի Արարիչ ու նախախնամոլ Աստծուն։ Համայնքը Հիսուսին ընդունում և իրեն Աստուծո Քրիստոսը, միակ Փրկիչ և Միջնորդ մարդկանց և Աստուծո մեջ։ Համայնքը հավատում ե Ավետարանի հայտարարած ձրի Քավության և Վերստին Ծննդյան Խորհուրդներին, Փրկության եյական պայմանն անանչելով կենդանի հավատքն ու ճշմարիտ ապաշխարությունը։ Նա հավատում է Քրիստոսի ծննդյան, կենաց, մահվան, հարության, համբարձման, 2-րդ գալստյան, մեռելների հարության, վերջին դատաստանի և հանդերձյալ կենաց իրողություններին ճիշտ այնպես, ինչպես սովորեցնում ե Ավետարանը։ Համայնքը յերկրագության առարկա ճանաչում և միայն Աստծուն՝ հանձին Հոր, Վորդու և Ա. Հոգու։ Համայնքն ընդունում և Մկրտությունը (լոկ ջրով) իրեն Վերստին Ծննդյան, իսկ Հաղորդությունը (սոսկ հացով և գինով) Քավության Խորհուրդների տեսանելի նշանակներ, այլ վոչ յերբեք փրկարար միջոցներ կամ պայմաններ։ Համայնքն ավետարանչությունը ճանաչում և աստվածային պատվեր, փրկությունը հայտարարելու յեզակի և ուղիղ միջոց ու Քրիստոսի յեկեղեցու սուրբ պարտականություն։ Համայնքն ամուսնությունն ընդունում ե իրեն աստվածային սահմանադրություն և դատապարտում ե խառը կամ ապօրինի կյանքն իր անդամների վերաբերմամբ Համայնքը, հարգելով որինական իշխանությունն իրեն աստվածային սահմանադրություն՝ նրան հնագանդելն Ավետարանի գծած սահմաններում, համարում և պարտավորեցուցիչ իր անդամների համար։ Համայնքը

նուրբ սահման և գծում Ավետ, Խորհուրդների, Փրկության պայմանների և շնորհաց միջոցների մեջ տալով յուրաքանչյուրին իր արժանի տեղը։ Համայնքը Ս. որը ձանաչում ե աստվածային սահմանադրություն և նրա նպատակահարմար պահպանությունը պարտավորիչ ու միանգամայն ոգտակար իր անդամներին։

#### Հատված 6. Համայնքի վարդապետությունը.

Վարդապետությունն այն մասնավոր հայեցողությունն ե, վորով Համայնքն արտահայտվում ե կրոնական վորեկե խնդրի նկատմամբ։ Համայնքը վարդապետությունը տարբերում ե գավանանքից նրանով, վոր առաջինի մեջ անդամներն ազատ են տարակարձիք լինելու, իսկ դավանանքի մեջ վոչ, վորովհետև դավանանքը Համայնքի հավատալյաց հիմնական սկզբունքն ե, իսկ վարդապետությունը՝ յերկրորդական։ Համայնքը հավասարապես հարգում և և այլ քրիստոնյահամայնքների վարդապետությունը, պայմանով, վոր այն չհակասե իր դավանանքին։

#### Հատված 7. Համայնքի նպատակը.

Համայնքի նպատակն ե գործել մարդկային սեռի յերջանկությունը՝ կովկելով վոչ թե չարիքի այս կամ այն տեսակի—ձեր, այլ բուն չարիքի գեմ։ Իսկ բուն չարիքը, ըստ տեսության Համայնքի, թագնված և մարդու անկյալ բնության ապականված սրտում։ Համայնքն ընդունում ե, վոր մարդու ճշմարիտ յերջանկությունը յերաշխավորելու և մշտնջենավորելու անհրաժեշտ պայմաններն են՝ ա) մեղքի թողություն, ) սրտի նորոգություն։ Իսկ այս արդյունքը կարելի

յե ձեռք բերել միմիայն Քրիստոսով։ Ավետարանչությունն ահա այս որհնյալ պատգամի ի լուր աշխարհի հոչակելն ե, իսկ նրա գործնականացումն՝ աշխարհի ճշմարիտու հարատև յերջանկության յեղակի և ստույգ պայմանը։ Այս նպատակին համելու համար Համայնքն իրեւ գլխավոր միջոց ճանաչում ե ավետարանչությունը, իսկ իրեւ ուժանդակիչ միջոց՝ քրիստոնեական դաստիարակությունը։

Հատված 8. Համայնքի սկզբունքը.

Համայնքն ընկերկենցաղի չարիքը թագնված չե համարում միայն դասակարգային խորության, աղքատության, տգիտության, կամ սրանց այլ և այլ յեղանակավորումների մեջ։ այլ այս ամենը, չարիքի հետ միասին, մարդու ապականված բնության, նրա աննորոգ սրտի մեջ։ Համայնքի տեսությամբ արդար և մաքուր կենցաղ ստեղծելու յեղակի ու ապահով պայմանը սուրբ սիրտն ե։ Ազգերի հարաբերությանց համերաշխություն, դասակարգային շահերի ներդաշնակություն, իրավունքների արդար կիրառում կամ տնտեսական բարեկցիկ վիճակ կարելի յե ստեղծել և մանավանդ ապահովել այն՝ հավատարիմ լինելով Ավետարանի բարոյական սկզբունքներին։ Սրանք են, վոր ուղղակի կամ անուղղակի նպաստում են տեսական հարստության, հանճարեղ մտքի և տնտեսական ու բարոյական յերջանիկ ու մաքուր կենցաղի պահպանմանը։ Համայնքն այն համոզմունքին ե, վոր յերբ վորդեզրի ու գործադրվի այս սկզբունքը, այն ժամանակ ընկերական կյանքը կմտնի իր ճշմարիտ ուղիի մեջ։ Ուստի չարիքը վերացնելու և մարդկային կյանքը

յերջանկացնելու համար Համայնքը վորդեզրել և սրտի դաստիարակության—նորոգության սկզբունքը։

Հատված 9. Համայնքի գործելակերպը.

Համայնքը զուտ կրոնական ե և հայկական, այսինքն նա բաղկացած ե հայերից և կազմում ե հայ ազգի մի անբաժան մասը։ ուստի իր գործունեյության բոլոր նյուղերում առաջնորդվում ե այն յեղանակով, վոր չվտանգվեն հայ ազգի որինական շահերը։ Համայնքը նաև ընկերական ե, ուստի նա վորդեզրել և գործելակերպի այնպիսի սկզբունք, վոր իր ազգի օրինական շահերը հետապնդելիս՝ չվտանգե ուրիշ ժողովուրդների արդար իրավունքները։ Համայնքը միանգամայն Քրիստոնեական ե, այսինքն՝ կազմված ե միմիայն հավատացյալներից։ Ուստի իր գործելակերպն ե ամեն աշխարհային շահ, ի պահանջել արդար և ստիպողական հարկի, զոհել Ավետարանին։ Համայնքի հասկացողությամբ՝ այնտեղ, ուր խոսում ե Աստված, պիտի լու ամեն վոք։

Հատված 10. Համայնքի խորհուրդները.

Համայնքը խորհուրդ ե ճանաչում փրկության տիրանալու այն մասնավոր յեղանակը, վոր հատուկ և միայն Ավետարանին, այսինքն՝ Քավությունը (մեղքի թողություն) և Վերստին Ծնունդը (անձի սրբություն)։ Համայնքի այդ ավետարանական խորհուրդները տեսանելի նշանակներով մատակարարվում և առարկայորեն բացատրվում են։ հավատացյալներին Հաղորդության և Մկրտության ծեսերով, վորոնք այդ պատճառով կոչվում են Համայնքի յեկեղեցական կամ ծիսական խորհուրդները։

Հատված 11.

Համայնքի յերկրագությունը.

Համայնքի աստվածաշտության նպատակն ե յերկրագության ուղիղ և ճշմարիտ վոգի մշակել հավատացյալների մեջ։ Համայնքի տեսությամբ՝ յերկրագությունն Աստուծո հետ հաղորդակցելու այն մասնավոր հարաբերությունն ե, վորով նրանք պիտի մշակեն իրանց հոգեոր կյանքը և, սրբացնելով, զարգացնեն այն։ Հավատալ, զգալ և ապրել այնպես, ինչպես հավատաց, զգաց և ապրեց Հիսուս, ահա ուղիղ և ընդունելի յերկրագությունն ըստ տեսության Համայնքի։ Յերկրագությունը Համայնքի ներքին աստվածաշտությունն ե։

Հատված 12.

Համայնքի պատամունք.

Պաշտամունքը Համայնքի արտաքին աստվածաշտությունն ե. Նրա տարրերն են՝ 1) աղոթք, 2) սաղմու-յերգ, վորին թույլատրելի յերաժշտական վայելու դործիքների մասնակցությունը, 3) Ս. Գրոց ընթերցում և ուսուցում, վոր կատարվում և քարոզների և կրոնական դասերի միջոցով։ Պաշտամունքը կատարվում և ամեն կիրակի որերը դրան հատկացյալ աղոթատներում (յեկեղեցի), իսկ առ ի չգոյի այդպիսիների, մասնավոր շենքերում կամ բացողյակուր որերը վորքան և ինչպես պաշտամունք կատարելը կախված ե յեկեղեցիների հաճությունից՝ ըստ պահանջման տեղային հանգամանքների։ Պաշտամունքներին կարող են ներկա լինել ամեն աղդից և կրոնից յերկանո անձինք, պայմանով, վոր լուրջ համեստություն և լուսթյուն պահպանեն։ Համայնքի բեմերից չի թույլատրվում վորեն անհատի կամ յեկեղեցու

հասցեյին նախատինք արտասանել կամ ազգային, քաղաքական և ընկերական խնդիրների մասին ճառել, վոչ ել քարոզին զուտ գիտական ճառախոսության կամ դասախոսության ձեւ տալ, այլ միմիայն Ավետարանը սովորեցնել ունկնդիրներին հասկանալի լեզվով և վոճով որինավոր պաշտոնյաների միջոցով։

Հատված 13.

Համայնքի ծեսերը.

Համայնքի յեկեղեցական-կրոնական ծեսերն են՝  
1) Պաշտամունքը, 2) Անդամնեկալությունը, 3) Հաղորդությունը, 4) Մկրտությունը, 5) Պաշտոնակարգը, 6) Պատրիքը, 7) հուղարկավորությունը և 8) յեկեղեցու հանդեսները։ Այս ծեսերը մատակարարվում են արտօնյալ պաշտոնյաների ձեռքով՝ բացի Պաշտամունքից, հուղարկավորությունից և հանդեսներից, վորոնք, առի չզոյի տեղական-արտօնյալ պաշտոնյայի, կարող են կատարել և իրավատեր հաղորդանդամները։ Ծեսերի մատակարարման յեղանակը կոչվում է արարողություն, և յուրաքանչյուր պաշտոնյա կամ յեկեղեցի աղատ ե ըստ իր հայեցողության կատարել այն։

Հատված 14.

Համայնքի պատոնյաները.

Համայնքի յեկեղեցական պաշտոնյաները բաժանվում են յերկու կարգի՝ ա) հոգեոր և բ) աշխարհական։ Հոգեոր պաշտոնյաները համարվում են՝ 1) յերեցը, 2) քարոզիչ-ավետարանիչը, 3) սարկավագը և 4) Ս. Գրոց դասերի Տեսուչը, վորոնք հոգում են զիսավորապես ժողովրդի հոգեոր պետքերը։ իսկ աշխարհական պաշտոնյաները նրանք են, վոր հոգում են զիսավորապես յեկեղեցու նյութական-պետքերը։ Պաշտոնյաներն

Ընտրվում են ժողովրդից և կարգվում են իրենց հասունացյալ գործում պաշտոնակարգի վորոշ ծիսակատարությամբ. Նրանց արվում են համապատասխան վկայագիր. Պաշտոնյաների գործունեյության համար Համայնքը պատասխանատու յե միայն այն ժամանակ, յերբ տվել են նրանց արտոնագիր՝ նույն գործը կատարելու համար. Արտոնյալ պաշտոնից կամ գործից դուրս կարմունքի համար պաշտոնյայի պատասխանատվությունն անձնական ե.

Հատված 15. Համայնքի նյութականը.

Համայնքի կրօնական պետքերի նյութականը հոգացվում են անդամների ամսավճարներով, յեկեղեցական գանձանակով, դուրս տրված թղթերի վորոշյալ սակագնով, մասնավոր նվերներով և բացառիկ գանձումներով. ամեն պարագայի տակ ել նյութականի գանձումը լինում է հոժարակամ և վոչ յերեք ստիպմամբ: Մի անգամ վճարված դումարն այլևս չի վերադարձվում: Դրամները ծախսվում են միմիայն հավաքված նպատակի համար: Նյութականը գանձվում է հետևյալ նպատակներով. 1) յեկեղեցական, 2) ավետարանչական, 3) Ս. Գրոց ուսուցման, 4) բարեգործական: Համայնքի կամ յեկեղեցիների նյութականը տնտեսվում է Հոգաբարձական Խորհուրդների ձեռքով:


Հատված 16. Համայնքը յեվ բարեկամ նյութականը.

Համայնքի հարաբերությունը բոլոր այլ քրիստոնյաց յեկեղեցիների կամ հարանվանությանց հետ բարեկամական ե ամենուրեք: Համայնքը մասնավոր համակրանք ունի դեպի «Ավետ» հավատացյալներն իրեն

նույն կրոնական ուղղությունն ու գործն ունեցող յեկեղեցիներ: Նա կարող է վերջիններիս հետ ավետարանչական գործի համագործակցություն ստեղծել տիրող կառավարության որենքի գծած սահմաններում: Ներկայումս Համայնքը պաշտոնական վոչ մի համագործակցություն չունի վորեւ Ավետ. կամ այլ քրիստուկեղեցիների առաքելությանց հետ: Քրիստոնեական հոժարական աջակցություն ավետարանչական գործի համար քույր-քրիստոնյաց յեկեղեցիների կողմից Համայնքը չի մերժում, ինչպես և չի զլանում նույնը նրանց, յեթե ձեռնհաս ե:

Հատված 17. Համայնքը յեվ բնկերական աժխարհը.

Համայնքը բարեկամ ե այն բոլոր ընկերական քաղաքական կազմակերպություններին, վորոնց նպատակն է մարդկային սեռի ընդհանուր յերջանկությունը գործել: Սակայն՝ վորովհետև այդ կազմակերպությունները հաճախ ընտրություն չեն անում միջոցների և գործելակերպի մեջ կամ մարդու ազնվագույն մնայուն շահը զոհում են նվաստագույնին—ժամանակավորին, ուստի Համայնքը նույն նպատակն ունենալով հանդերձ՝ գործելակերպի կամ միջոցի ընտրության մեջ կարող ե պատահել վոր յերբեմն չհամաձայնվի նրանց: Համայնքը թույլատու յե իր անդամների նկատմամբ, վոր նրանք ունենան իրանց անհատական տեսությունը և գործելակերպը քաղաքական զանազան խնդիրների մասին անձնական պատասխանատվությամբ, պայմանով, վոր չգավաճանեն Համայնքի դավանանքը: Համայնքն այսպիսի խնդիրներում դատասամբ մասնավոր նվազմունք, յերբ, բոլոր պարագաները առնելով գտնում ե այն վոչ քրիստոնեական



NL0926350

170 /

---

դամների համար: Կրոնական հայեցո  
քաղաքացիական որինավոր պար  
խուսափելու տեսակետը Համայնքի վ  
նից դուրս ե. դա համարվում և անհատի սեփական  
գործ՝ անձնական պատասխանատվությամբ:

Հատված 18. Համայնքը լեկ ներկա կյանքը.

Համայնքը ներկա կյանքի մեջ գտնում և որինա-  
վոր հաճույք—բարիքներ և իր անդամներին իրավունք  
և համարում բաղձալ նրանց, գործել նրանց համար և  
խնդրել այն՝ արդար ճանապարհով նրանց տիրանալու  
և վայելելու համար: Համայնքն այս աշխարհը կամ  
նրա վայելքը չի համարում չարիք—մեղք, այլ աշխար-  
հի մեջ ընդունում և մեղքի—չարիքի գոյություն: Վոչ  
թե աշխարհի վայելքը, այլ վայելման ծուռ յեղանակն  
և դատապարտում: Ուստի Համայնքը քաջալերում և  
ամեն իմաստուն ջանք, վոր նպատակ ունի գիտական  
մեթոդներով սպագործել բնության հարստություն-  
ները և արդարությամբ բաշխել այն բոլոր մարդկանց  
հավասարապես վայելելու համար:

**ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ստորագրություն)**

**ՔՍ. ՐՏՈՒՂ. Ա. Բ. (ստորագրություն)**

15 հոկտեմբեր 1923 թ.

Յերևան

